ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/18

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Մեգիէլ» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Փարիզյանի (պետական ռեգիստրի գրացման համար՝ 273.110.03081)

«Մեգիէլ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Ա. Սարգսյանի (լիազորագիր՝ տրված 02.04.2021թ.),

քննելով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.03.2021թ. ներկայացված (31.03.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 29.03.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1 «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով բաց մրցույթ, որն իրականացվելու է մեկ փուլով:

1.2 Հրավերը հրապարակվել էր 05 մարտի 2021թ և մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանված եղել 22 մարտի 2021թ ժամը՝ 12:00 ներառյալ:

1.3 «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով մրցույթին մասնակցելու նպատակով ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրերում արձանագրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների անհամապատասխանություն:

1.4 Ըստ Ընկերության՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման պահանջին չեն համապատասխանում մրցույթի 4-րդ, 5-րդ, 14-րդ չափաբաժինները:

1.5 Հրավերով սահմանված ժամկետում Ընկերությունը նշված չափաբաժինների և պայմանագրի մատակարարման ժամկետի վերաբերյալ պարզաբանում է պահանջել Պատվիրատուից:

1.6 Ներկայացված հարցադրումների վերաբերյալ պարզաբանում տրվել է մասնակի:

1.7 Պարզաբանումից հետո փոփոխված հրավերը հրապարակվել է 16.03.2021թ և հայտերի բացման ժամկետ է սահմանվել 31.03.2021թ ժամը՝ 12:00-ը:

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Օրենքի նպատակն է ի թիվս այլի գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացումը:

Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ներկայացված նորմերի վերլուծությունից փաստում ենք, որ գնումների օրենսդրությունը հիմնվում է գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, ապահովելով գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման եւ վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված եւ համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաեւ աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի եւ այլ ոչ գնային պայմանների ամբողջական եւ համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի,

ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշման 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

2.2 Ղեկավարվելով Օրենքի 29-րդ հոդվածով՝ Պատվիրատուին ներկայացվել է պարզաբանման համար հետեւյալ հարցադրումները.

1. 4-րդ չափաբաժնով պահանջվում է Մեդտրոնիք ֆիրմայի կաթետոր ախտորոշիչ, որի նկարագրից պարզ է դառնում, որ նշված JR 4.5 ձեւի ապրանք Մեդտրոնիք ընկերությունը չի արտադրում, խնդրում եմ պարզաբանել նշված անհստակությունը և տեխնիկական բնութագրում կատարել շտկում:

2. 5-րդ չափաբաժնով պահանջվում է Մեդտրոնիք ֆիրմայի կաթետոր բալոն, որով պահանջվում է RX կամ NC տիպի, տրամագիծը 1.5-5 մմ տիրույթում: Նույն չափաբաժնով ներկայացված է երկու տեսակի ապրանք որոնցից յուրաքանչյուրն ունի հստակ տրամագիծ: Նշված ապրանքները ունեն իրենց բնորոշ չափը, այսինքն դրանցից յուրաքնաչյուրը չունի միեւնույն ժամանակ 1.5-5 մմ տիրույթը: Նույն խնդիրը վերաբերում է նաեւ երկարությանը:

Խնդրում եմ հստակ պարզաբանել նշված անորոշությունը, քանի որ տարընկալման տեղիք է տալիս և ապրանքներն առանձնացնել առանձին չափաբաժիններով նշելով նրանց բնորոշ արտադրական չափերը տիրույթի և երկարության մասով:

3. 14-րդ չափաբաժնով պահանջվում է Մեդտրոնիք ֆիրմայի ստենտ դեղապատ Resolute integrity, պահանջվող տրամագիծը 2-4 մմ տիրույթում: Նշված ֆիրման նշված մոդելը 2 մմ տրամագծով չի արտադրում, խնդրում եմ պարզաբանել նշված անհստակությունը և կատարել շտկում տեխնիկական բնութագրում:

Պարզաբանել և տեխնիկական բնութագրում կատարել փոփոխություն նաև նշված չափաբաժիններով պահանջվող ապրանքների քանակները ըստ չափերի և ձևերի:

Ներկայացված հարցադրումների վերբերյալ Պատվիրատուն 15.03.2021թ տրված պարզաբանմամբ հայտնել է հետևյալը.

Պարզաբանում 1.

Հրավերով չի պահանջվել Մեդտրոնիք ֆիրմայի կաթետր ախտորոշիչ, այլ Մեդտրոնիք ֆիրմայի կամ համարժեքը: Այնուամենայնիվ տեղ է գտել հրավերի տեխնիկական բնութագրում վրիպակ չափի մասով, կկատարվի հրավերի փոփոխություն եւ վրիպակը կշտկվի:

Պարզաբանում 2.

Հրավերով չի պահանջվել Մեդտրոնիք ֆիրմայի կաթետր ախտորոշիչ, այլ Մեդտրոնիք ֆիրմայի կամ համարժեքը: Ինչ վերաբերվում է տրամագծերի եւ երկարությունների տիրույթներին, ապա Պատվիրատուն նկատի է ունեցել արտադրողի կողմից արտադրվող կոնկրետ չափերը, որոնք ընկած են ներկայացված տիրույթում՝ ըստ տրամագծերի եւ երկարությունների: Տարընկալման տեղիք չտալու նպատակով հրավերում կփոփոխվեն ներկայացված ցուցանիշները և կնշվեն հստակ տրամագծեր և երկարություններ:

Միաժամանակ պարզաբանում ենք, որ առանձին չափաբաժիններ առանձնացնելու հետ կապված Ձեր առաջարկը ընդունելի չէ Պատվիրատուի կողմից հետևյալ պատճառներով.

Հրավերով նախատեսված ապրանքներն ունեն այնպիսի առանձնահատկություն, որը թույլ չի տալիս նախօրոք կանխատեսել կիրառման ենթակա ապրանքի կոնկրետ չափը և ձևը: Այսինքն, կիրառման ենթակա կաթետր բալոնի չափերը և ձևը պարզ է դառնում հենց ինվազիվ միջամտության ընթացքում, և այդ պահին հիվանդի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակ չունենալու համար Պատվիրատուն (բնականաբար նաև Մատակարարը՝ Ըստ Պատվիրատուի պահանաջի) պետք է ապահովի բոլոր հնարավոր

չափերի և ձևերի առկայություն: Այս առանձնահատկությունից ելնելով Պատվիրատուները չեն կարող ըստ առանձին չափերի և ձևերի նախապես կատարել քանակական կանխատեսումներ:

Պարզաբանում 3.

Հրավերով չի պահանջվել Մեդտրոնիք ֆիրմայի Resolute integrity դեղապատ ստենտ, այլ Մեդտրոնիք ֆիրմայի Resolute integrity դեղապատ ստենտ կամ դրան համարժեքը: Ինչ վերաբերվում է 2մմ տրամագծին, ապա դա տեխնիկական վրիպակ է և պետք է նշվեր 2.25: Տարընկալման տեղիք չտալու նպատակով հրավերում կփոփոխվեն ներկայացված ցուցանիշները եւ կնշվեն հստակ տրամագծեր և երկարություններ:

Միաժամանակ պարզաբանում ենք, որ առանձին չափաբաժիններ առանձնացնելու հետ կապված Ձեր առաջարկը ընդունելի չէ Պատվիրատուի կողմից հետեւյալ պատճառներով.

Հրավերով նախատեսված ապրանքներն ունեն այնպիսի առանձնահատկություն, որը թույլ չի տալիս նախօրոք կանխատեսել կիրառման ենթակա ապրանքի կոնկրետ չափը և ձեւը: Այսինքն, կիրառման ենթակա կաթետր բալոնի չափերը և ձևը պարզ է դառնում հենց ինվազիվ միջամտության ընթացքում, և այդ պահին հիվանդի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակ չունենալու համար Պատվիրատուն (բնականաբար նաև Մատակարարը՝ Ըստ Պատվիրատուի պահանաջի) պետք է ապահովի բոլոր հնարավոր չափերի ձևերի առկայություն: Այս առանձնահատկությունից ելնելով Պատվիրատուները չեն կարող ըստ առանձին չափերի և ձևերի նախապես կատարել քանակական կանխատեսումներ:

Ընկերության կողմից ներկայացված հարցերի վերաբերյալ ըստ էության տրվել է մասնակի պարզաբանում: Պատվիրատուն պատճառաբանում է, որ հնարավոր չէ կանխատեսում անել, մինչդեռ կանխատեսում անելու անհրաժեշտություն չկա, այլ պետք Պատվիրատուն տասնամյակների գործունեության արդյունքում ունենար ապրանքների սպառման վիճակագրություն, ինչպես ունի որոշ ապրանքների գնման համար:

16.03.2021թ Ընկերությունը պարզաբանում է պահանջել նաև հետևյալի մասին.

Հարգելի՛ գնահատող հանձնաժողով, ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ընթացակարգի 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժինների վերաբերյալ Ձեր կոմից տրված պարզաբանումը, նկատի չունենալով վրիպակները, հիմնավոր չէր, քանի որ նշված չափաբաժինների տեխնիկական բնութագրերում նշված է մեկ ապրանքային նշան, սակայն ըստ չափերի և ձևերի դրանք տարբեր ապրանքներ են:

Եթե մասնակիցը հայտ է ներկայացնում տվյալ չափաբաժնի միայն իր կողմից նախընտրելի չափի և ձևի ապրանքի վերաբերյալ, քանի որ հնարավոր չէ միևնույն ժամանակ պահեստավորել ապրանքանիշի բոլոր չափերը և ձևերը անորոշ քանակի, իսկ նշված չափաբաժիններում կան ապրանքների չափեր և ձևեր որոնք գործնականում երբեք չեն կիրառվում կամ կիրառվում են շատ հազվադեպ, որոնց քանակը կանխատեսելի է բուժ հիմնարկի համար, ուստի հազվադեպ օգտագործվող ապրանքների ներկրումը և պահեստավորումը անորոշ քանակով իրատեսական չէ, որը հնարավոր է նաև չպահանջվի Պատվիրատուի կողմից, ուստի՝ վնաս կրելու ռիսկը (ապրանքի ձեռք բերման, ներկրման ծախսեր) կրում է մասնակիցը:

Այսպիսով, ապրանքները ըստ չափի և ձևի անհրաժեշտ է ներկայացնել առանձին չափաբաժիններով, այդպես նաև կընդլայնվի մասնակիցների շրջանակը, Պատվիրատուն կունենա ընտրության լայն հնարավորություն, ինչպես արտադրողների, այնպես էլ՝ գնային առաջարկների առումով:

Ինչ վերաբերում է պայմանագրով մատակարարման համար սահմանված 5 աշխատանքային օրվան, ապա գործնականում հնարավոր չէ պատվերի մատակարարումը կատարել չափից դուրս սուղ, ոչ իրատեսական ժամկետում, ուստի՝ անհրաժեշտ է պատվեր տալուց հետո մատակարարման համար սահմանել ողջամիտ ժամկետ, նկատի ունենալով, որ ներկրման համար անհրաժեշտ է 15-20օր:

Սահմանված 5 աշխատանքային օրը չփոփոխելու դեպքում մատակարարները կանգնած կլինեն այն իրողության առաջ, որ 5 աշխատանքային օրվա ընթացքում չմատակարարելու դեպքում, պայմանագիրը պատվիրատուն միակողմանի կդադարեցնի և կնախաձեռնի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ: 5 օրյա ժամկետի սահմանումը կարծես թե պատահական չէ ընտրված:

Սույն հարցադրմանն ի պատասխան Պատվիրատուն հայտնել է.

Հրավերով նախատեսված ապրանքների սպառումը գործնականում իրականացվում է ամեն օր կախված հիվանդից տարբեր քանակով և չափերի, ուստի մինչև չլինի սպառում Պատվիրատուն չի կարող կանխատեսել անհրաժեշտ ապրանքի պահանջարկը: Միաժամանակ Պատվիրատուն չի կարող սահմանել մատակարարման համար այնպիսի ժամկետներ, որոնց դեպքում բժշկական կենտրոնը կմնա առանց ապրանք, ինչը կարող է հանգեցնել անդառնալի հետեւանքների: Բացի այդ, եթե հարցադրում իրականացնողի

համար այդ ժամկետը ընդունելի է 15-20 օրվա դեպքում, ինպես նշել է, ապա մեկ ուրիշի համար դա կարող է լինել Օրինակ՝ 2-3 ամիս կամ ավելի: Այդ ժամկետի ցուցանիչը չի կարող սահմանվել ըստ հնարավոր մատակարարի հարմարության, այլ սահմանվում է Պատվիրատուի կարիքից ելնելով՝ ապրանքի անհրաժեշտությանը համապատասխան: Միաժամանակ, 5 աշխատանքային օրում ներմուծում իրականացնելը իրատեսական է, դրա համար կա օրինակ՝ արագ օդային ճանապարհ: Այսպիսով, մատակարարման համար անհիմն երկար ժամկետների սահմանումը անընդունելի է Պատվիրատուի համար:

2.3 Վիճարկվող հրավերի տեխնիկական բնութագրերի 4-րդ, 5-րդ եւ 14-րդ չափաբաժինների նկարագրությունը չեն համապատասխանում նշված նորմերի պահանջներին և չեն ապահովում Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված նպատակների և սկզբունքների կրառումը:

Մրցույթի վիճարկվող չափաբաժիններով պահանջվող բժշկական պարագաների տեխնիկական բնութագրերի նկարագրի ձեւակերպումները և այդ պարագաների տեսակները ներկայացված են այնպես որոնք տարընկալման և մասնակիցների շրջանակի սահմանափակում են առաջացնում:

4-րդ չափաբաժով Պատվիրատուն պահանջում է կաթետեր ախտորոշիչ 500 հատ, 5-րդ չափաբաժնով՝ կաթետեր բալոն 100 հատ և 14-րդ չափաբաժնով ստենտ դեղապատ 100 հատ (կից ներկայացվում է տեխնիկական բնութագիրը):

Նշված չափաբաժիների տեխնիկական բնութագրերում նշված է մեկ ապրանքային նշան, սակայն ըստ չափերի և ձևերի դրանք տարբեր ապրանքներ են: Նշված չափաբաժիններում կան ապրանքների չափեր և ձևեր որոնք գործնականում երբեք չեն կիրառվում կամ կիրառվում են շատ հազվադեպ, որոնց քանակը կանխատեսելի է բուժ հիմնարկի համար, ուստի՝ որեւէ անհնարինություն, խոչընդոտ առկա չէ դրանք առանձին չափաբաժիններով ներկայացնելու համար:

Հրապարակված ձեւաչափով տեխնիկական բնութագիրը չի բավարարում մեկից ավելի հնարավոր մասնակիցների մասնակցությունը, եթե մասնակիցը կարող է ընթացակարգին մասնակցել օրինակ մի կամ երկու չափի ստենտով կամ կաթետեր ախտորոշիչով կամ բալոնով, սակայն մի չափաբաժնով պահանջվում են մի քանիսը, ապա արհեստականորեն սահմանափակվում է մասնակիցների շրջանակի ընդլայնումը:

Այսպիսով, ապրանքները ըստ չափի եւ ձևի անհրաժեշտ է ներկայացնել առանձին չափաբաժիններով, այդպես նաև կընդլայնվի մասնակիցների շրջանակը, Պատվիրատուն

կունենա ընտրության լայն հնարավորություն, ինչպես արտադրողների, այնպես էլ՝ գնային առաջարկների առումով: Առանձին չափաբաժիններով ներկայացնելու դեպքում Պատվիրատուն կղեկավարվի Օրենքի 3-րդ հոդվածով, ապահովելով՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Այսպիսով, վերը ներկայացված չափաբաժինների տեխնիկական բնութագրերը ներկայացված են նույն տրամաբանության մեջ: Մեկ չափաբաժնով պահանջվում է բուժպարագա տարբեր չափերի, իսկ քանակը հստակ չի նշված յուրաքանչյուր չափի համար: Պատվիրատուի ներկայացրած տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին և հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ: Չափաբաժիններով ներկայացված տարբեր չափերի ապրանքների հազվադեպ կամ երբեմն նաև չօգտագործվող ապրանքների ներկրման և պահեստավորման վնաս կրելու ռիսկը (ապրանքի ձեռք բերման, ներկրման ծախսեր) կրում է մասնակիցը:

2.4 Մրցույթի արդյունքում կնքվող պայմանագրով մատակարաման համար Պատվիրատուն սահմանում է 5 աշխատանքային օր՝ պատվերը ներկայացնելուց հետո: Գործնականում հնարավոր չէ պատվերի մատակարարումը կատարել չափից դուրս սուղ, ոչ իրատեսական ժամկետում, ուստի՝ անհրաժեշտ է պատվեր տալուց հետո մատակարաման համար սահմանել ողջամիտ ժամկետ, նկատի ունենալով, որ ներկրման համար անհրաժեշտ է 15-20 օր: Սահմանված 5 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարում իրականացնելը կարող էր հնարավոր և հիմնավորված լիներ, եթե Պատվիրատուն պահանջվող ապրանքները խմբավորված չներկայացնի և հստակ նշի թե որ չափի և ձևի բուժ պարագայից քանի հատ պետք է մատակարարվի:

Ինչ վերաբերում է ներմուծման օդային արագ ճանապարհի Պատվիրատուի ուղղորդմանը, ապա այդ ճանապարհով ներմուծող ընկերությունների պաշտոնական պատասխանը ժամկետների վերաբերյալ կներկայացնենք բողոքի քննության ընթացքում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից:

Քանի որ Օրենքով հստակ կարգավորված չէ մատակարարման ողջամիտ ժամկետ, ուստի պետք է ղեկավարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի նորմերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ եթե պայմանագրի պայմանը սահմանված չէ կողմերի համաձայնությամբ կամ դիսպոզիտիվ նորմով, համապատասխան պայմանը որոշվում է կողմերի հարաբերությունների նկատմամբ կիրառվող գործարար շրջանառության սովորույթներով:

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ընթացակարգով պայմանագրի մատակարարման ժամկետ սահմանված չէ կողմերի համաձայնությամբ և դիսպոզիտիվ նորմով էլ կարգավորված չէ:

Ելնելով գործարար շրջանառության սովորույթներից ապրանքի ներկրումը տեղի է ունենում 15-20 օրվա ընթացքում, հետևաբար 5 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարում ապահովելն իրատեսական չէ, հատկապես այն դեպքում, երբ տեխնիկական բնութագրերով մեկ չափաբաժնի ներքով ներառված են մի քանի չափերի ապրանքներ անորոշ քանակի պահանջով:

Այսպիսով, պայմանագրով նախատեսված մատակարարման 5 աշխատանքային օրը չփոփոխելու դեպքում մատակարարները կանգնած կլինեն այն իրողության առաջ, որ 5 օրվա ընթացքում չմատակարարելու դեպքում, պատվիրատուն պայմանագիրը միակողմանի կդադարեցնի և կնախաձեռնի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն բողոքը համապատասխանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին.

1. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անվանումը (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի պատճենը) և հասցեն.

2) պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը եւ առարկան.

4) վեճի առարկան եւ բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի եւ իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

Օրենսդրի կողմից սահմանված վերոնշված պահնաջներն առկա են սույն բողոքում:

Եթե բողոքով ներկայացված վեճի առարկայի և պահանջի միջև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի դիտարկմամբ կան որոշակի անհստակություններ, ապա դա ամենևին բողոքը վերադարձնելու հիմք չի կարող լինել:

Ներկայացված բողոքի իրավական հիմքերի և ապացույցների լրացման, փոփոխման նպատակով բողոքաբերը սահմանափակված չէ և դրանք կարող է ներկայացնել նաև բողողոքի քննության ընթացքում, ինչ վերաբերում է բողոքի պահանջին և վեճի առարկային, ապա այդ առումով ևս բողոքաբերը սահմանափակված և կաշկանդված չէ լրացնելու և/կամ փոփոխելու, հսատկեցնելու բողոքի քննության ընթացքում, ընդհուպ մինչև բողոք քննող անձի կողմից որոշում կայացնելը: Պահանջի փոփոխման, լրացման կամ նոր ապացույցներ և իրավական հիմքեր ներկայացնելու անհրաժեշտությունը կարող է ստեղծվել նաև Պատվիրատուի կողմից ներկայացրած դիրքորոշումից»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 4-րդ, 5-րդ 14-րդ չափաբաժինների և պայմանագրի մատակարարման ժամկետի մասով»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.04.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր տնօրենի և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Այնուհետև՝ 09.04.2021թ., ի լրումն վերը շարադրված բողոքի հայտնել է հետևյալը.

« ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 ծածկագրով քննվող բողքի առնչությամբ հավելում ենք հետեւյալը.

Ներկայացուցչի դիտարկումը բողոքարկվող չափաբաժինների մասով, այն որ չի կարող ներկայացնել չափերը առանձին չափաբաժիններով անհիմն է, իր գրավոր դիրքորշմամբ չի ներկայացրել ապացուցող որևէ փաստական հանգամանք:

Գնումների մասին ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

Նշված հոդվածին հղում է արվել նաև Պատվիրատուի կողմից, որով հավաստում է, որ այո՛ մեկ չափաբաժնում խմբավորել է առանձին բնութագրեր ունեցող առարկաներ: Սակայն Պատվիրատուն չի հիմնավորել օրենքով նախատեսված բացառությունը՝

խմբավորման անհրաժեշտությունը: Պարզապես հայտնել, որ «հնարավոր չէ ներկայացնել առանձին չափաբաժիններով, քանի որ բժշկական ծառայություն մատուցելուց պետք է ունենան բոլոր չափերը», դա որպես ողջամիտ հիմնավորում չի կարող գնահատվել: Տարիներ շարունակ ձեռք բերվող ապրանքների սպառման քանակի և ձեռքբերման անհրաժեշտության վիճակագրություն ձեւավորելը բարդագույն խնդիրը չէ, իսկ եթե չունեն այդ վիճակագրությունը, ապա դա միտման դրսեւորում է, մրցակցությունը սահմանափակելու եւ ցանկալի հայտատուի հետ մատակարարման պայմանագիր կնքելու նպատակով:

Ներկայացված չափաբաժինների քանակի առումով, օրինակ 4-րդ չափաբաժնով պահանջվում է 500 հատ ախտորոշիչ կաթետր երկու չափերի և բազմաթիվ տեսակների, մասնակցի համար անկանխատեսելի է, թե Պատվիրատուն ե՞րբ, ո՞ր չափից և ո՞ր տեսակից պատվեր կներկայացնի, որի չմատակարարման դեպքում Պատվիրատուի համար հիմք է ստեղծվում մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելուն, այն էլ, երբ մատակարարման ժամկետ է սահմանված 5 աշխատանքային օր: Նշված ընթացակարգից խուսափելու միակ միջոցը ստացվում է, որ մասնակիցը նշված չափերի եւ բազմաթիվ ձևերի ապրանքներից յուրաքանչյուրից պետք է պահեստավորած ունենա 500 հատ (նույնը վերաբերում է նաեւ 5-րդ եւ 14-րդ չափաբաժիններին), այլ կերպ չենք կարող հասկանալ սույն տեխնիկական բնութագիրը:

01.04.2021թ գրությամբ հղում անելով օրենսդրական նորմերին, բավարար չէ հիմնավորված դիրքորոշում ընկալել, դրանց վերաբերելիությունը կարող է գնահատվել բացառապես առկա փաստական հանգամանքների տրամաբանական վերլուծության արդյունքում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է՝

Պատվիրատուին պարտավորեցնել չկայացած համարելու ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի 4-րդ, 5-րդ եւ 14-րդ չափաբաժինները

կամ

Պարտավորեցնել ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժիններում՝ բողոքով ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ,

տեսակները՝ համապատասխան չափերով առանձնացնելով առանձին չափաբաժիններով և նշել հստակեցված պահանջվող քանակ:

2. <u>«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 01.04.2021թ թիվ 08-177 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 29.03.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 ծածկագրով բողոքի, հայտնում ենք հետևյալը.

Մինչև հրավերով սահմանված վերջնաժամկետի լրանալը, Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն Պատվիրատուին ներկայացվել է հրավերի վերաբերյալ պարզաբանումների պահանջ և սահմանված ժամկետում տրվել պատասխան: Այն հանգամանքը, որ տրամադրված պարզաբանումները ընդունելի չեն եղել պարզաբանում պահանջած ընկերության համար, չի կարող դիտարկվել որպես պարզաբանումներին մասնակի տրված պատասխաններ:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է հետևյալը.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածը սահմանում է հետևյալը.

«1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

2. Գնումների գործընթացին որևէ երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի (անձանց) մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է հետևյալը.

2. Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 4-րդ կետը սահմանում է.

Գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Պատվիրատուն հանդիսանում է մասնագիտացված բժշկական կենտրոն, հիմնականում իրականացնում է սրտի վիրաբուժության հետ կապված ծառայություններ: Պատվիրատուն իր բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ ապրանքների պլանավորումն ու քանակների սահմանումն իրականացնում է նախորդ տարվա բժշկական միջամտությունների քանակի և դրանց ընթացքում իրականացված ապրանքների ծախսի հիման վրա: Եթե նախորդ տարում, օրինակ կենտրոնն իրականացրել է պայմանական թվով ստենտավորման կամ այլ վիրահատություն, ապա դա այն բազային տվյալն է, որը հաշվի է առնվում գնման պլանը, ինչպես նաև ծախսերի և եկամուտների նախահաշիվը կազմելիս: Հրավերով նախատեսված ապրանքներն ունեն այնպիսի առանձնահատկություն, որը թույլ չի տալիս նախօրոք կանխատեսել կիրառման ենթակա ապրանքի կոնկրետ չափը և ձևը: Այսինքն, կիրառման ենթակա ախտորոշիչ կաթետրի չափը և ձևը պարզ է դառնում հենց հիվանդի ախտորոշման ընթացքում, և այդ պահին հիվանդի կյանքին վտանգ սպառնացող իրավիճակ չունենալու համար Պատվիրատուն

պետք է ունենա բոլոր հնարավոր չափերի և ձևերի առկայություն պահեստում: Նույն առանձնահատկությունը առկա է նաև Հրավերով նախատեսված բոլոր այն ապրանքների համար, որոնց բնութագրերում խմբավորված են տարբեր չափեր և (կամ) ձևեր: Տվյալ ապրանքների չափերի վերաբերյալ բժշկական ցուցումը պարզվում է հենց միջամտության ընթացքում: Այս առանձնահատկությունից ելնելով Պատվիրատուները չեն կարող ըստ առանձին չափերի և ձևերի կատարել քանակական կանխատեսումներ, ուստի և իրականացնել ճշգրիտ պլանավորում ծախսերի և եկամուտների նախահաշվի շրջանակներում: Հակառակ դեպքում պետք է անորոշ շատ քանակներով իրականացվի պլանավորում բոլոր չափերի մասով, ինչը հանգեցնելու է տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշվի բացասական սալդոյի ձևավորմանը, երբ նույն եկամուտների պարագայում անհամաչափ մեծանալու է ծախսային բաղադրիչը: Նման իրավիճակը հակասում է Օենքով նախատեսված Պատվիրատուի կարիքին համապատասխան գնում կատարելու պահանջին:

Բոլոր արտադրողները, նրանց ներկայացուցիչները կամ դիստրիբյուտորները իրենց կողմից ներկայացվող ապրանքների համար ապահովում են ամբողջ ապրանքային շարքը՝ համապատասխան բոլոր չափերով և ձևերով: Միաժամանակ անկախ ապրանքի չափերից միշտ նույնն են ապրանքի ինչպես ձեռքբերման, այնպես էլ վաճառքի գները:

Մասնակցի այն պնդումը, որ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերը չեն ապահովում մեկից ավելի հնարավոր մասնակիցների մասնակցություն, անհիմն է, քանի-որ ընթացակարգին կարող են մասնակցել ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ ընկերություններ, որոնք ունեն հնարավորություն ներմուծել ապրանքը ցանկացած երկրից, ապրանքներ արտադրող ցանկացած կազմակերպություն ունի անկասկած մեկից ավելի ներկայացուցիչներ, դիստրիբյուտորներ: Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն, դրանք պետք է լինեն հնարավորինս հստակ և մանրակրկիտ նկարագրված: Նման պարագայում անհնար է նկարագրել ստենտը կամ կաթետրը, առանց ներկայացնելու դրա հնարավոր բոլոր չափերը և ձևերը:

Ինչ վերաբերում է բողոքաբերի 2-րդ պահանջին, կապված մատակարարման ժամկետների հետ, հայտնում ենք հետևյալը.

Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի ը ենթակետի՝ կնքվելիք պայմանագրով ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետը, իսկ փուլային ձևով պայմանագրի

կատարման դեպքում՝ առաջին փուլի ժամկետը, որը չպետք պակաս լինի 20 օրացուցային օրից:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 523-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.

2. Պայմանագրով մատակարարման փուլերի հետ մեկտեղ կարող է սահմանվել ապրանքների մատակարարման ժամանակացույց (տասնօրյա, ըստ օրերի, ժամերի և այլն):

Հրավերով նախատեսված 2.1.7.1 կետով Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Ընդ որում, վերոնշյալ կետով սահմանված օրերի քանակը նախատեսում է Պատվիրատուն:

Համադրելով վերը նշված կետերը, հանգում ենք այն եզրակացության, որ բողոքաբերի կողմից ապրանքի մատակարարման համար ընդունելի համարվող 15-20օր ժամանակահատվածը հրավերով արդեն իսկ սահմանված է և մասնակցի այն մտահոգությունը, թե 5 օրյա ժամկետի խախտումը կարող է հանգեցնել հնարավոր մասնակիցների գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելուն, անհիմն է:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի 6-րդ կետի վկայակոչմանը, ապա գտնում ենք որ սույն դրույթի նման կերպ մեկնաբանումը վերաբերելի չէ բողոքով ներկայացված պահանջին, քանի-որ տվյալ դեպքում բողոքաբերը հանդիսանում է գնման գործընթացի հնարավոր մասնակից, այլ ոչ թե պայմանագրի կողմ:

Վերոնշյալ կետի մեջբերումն ընդամենը ապացուցում է այն իրողությունը, որ ինչպես նախկինում, այնպես էլ ներկայում, պատվիրատուն նման մատակարարման պայմաններով հայտարարել է գնման ընթացակարգեր, որին մասնակցություն են ունեցել տարբեր մասնակիցներ, այդ թվում նաև բողոքաբեր ընկերությունը, որով փաստվում է այն հանգամանքը, որ տվյալ պայմանն ընդունելի է և հանդիսանում է գործարար շրջանառության սովորույթ:

Բժշկական կենտրոնի գործունեության նպատակը կենտրոն դիմած բուժառուների ժամանակին, պատշաճ որակով բժշկական ծառայությունների մատուցումն է, ուստի պատվիրատուն գնման գործընթաց նախաձեռնելիս պարտավոր է գնումների մասին

օրենսդրության պահանջների պահպանմանը զուգահեռ ապահովել նաև իր անմիջական գործունեությունից բխող պահանջների պահպանում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է:

Այս համատեքստում գնման գործընթացների շրջանակում պատվիրատուի սահմանած պայմանները, որոնք չեն հակասում գնումների օրենսդրության պահանջներին, հնարավոր մասնակիցների կողմից ընդունելի չլինելը չի կարող դիտարկվել որպես օրենսդրության պահանջների խախտմամբ իրականացվող գործընթաց:

Ապրանքների վերոնշյալ առանձնահատկությունների և ըստ համարների քանակների անկանխատեսելիության մասով, որպես պաշտոնական պարզաբանում Ձեզ ենք տրամադրում ՀՀ ԱՆ նախարարի 22.07.2016թ. թիվ ԱՄ/06.1/8130-16 գրությունն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարին և ֆինանսների նախարարության պատասխանը ՀՀ Առողջապահության նախարարությանը:

Ամփոփելով վերոգրյալը, գտնում ենք, որ Մասնակցի բողոքը հիմնավոր չէ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 05.04.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

Այնուհետև՝ 13.04.2021թ., թիվ 08-189 գրությամբ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ի լրումն ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 ծածկագրով բողոքի շրջանակներում մեր ներկայացրած դիրքորոշման, հայտնում ենք հետևյալը.

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 05.04.2021թ. ժամը 10:20-ին հրավիրված և տեղի ունեցած նիստին Պատվիրատուի ներկայացուցիչները հնարավորություն չունեցան մասնակցել, ուստի նիստի ընթացքին Պատվիրատուն հետևել է առցանց և բողոքաբերի կողմից ներկայացված փաստաթղթերի և արտահայտած դիրքորոշումների շուրջ հայտնում է հետևյալը.

Պատվիրատուն իր գործունեության ընթացքում որոշ ապրանքների առանձնահատկությամբ պայմանավորված ապահովում է դրանց հնարավորինս բավարար քանակների պահեստավորում: Այդ ապրանքների պատվերները մատակարարներին չեն ներկայացվում անմիջապես միջամտության ընթացքում, ինչպես նշում է բողոքաբերը, այլ

միայն փաստացի սպառումից հետո ունենալով ծախսի պատկեր, պատվիրատուն անմիջապես ներկայացնում է պատվեր մատակարարներին՝ փորձելով լրացնել իր անհրաժեշտ պահեստային քանակները: Նշված քանակները չվերականգնելու դեպքում կարող է ստեղծվել իրավիճակ, երբ կենտրոն դիմած բուժառուի համար պահեստում առկա չլինի անհրաժեշտ չափի և ձևի ապրանք: Դրանով է պայմանավորված մատակարարման նման ժամկետի սահմանումը: Հաշվի առնելով նշված առանձնահատկությունները բոլոր մատակարարները, այդ թվում նաև բողոքաբերը, կենտրոնի հետ միշտ համագործակցել են նման մատակարարման պայմանով:

Ինչ վերաբերում է բեռնափոխադրման և մաքսազերծման հետ կապված ժամկետների մասով բողոքաբերի կողմից որոշ ընկերությունների ուղղված հարցումներին և վերջիններիս կողմից տրամադրված պատասխաններին, ապա այդ պատասխաններում պատվիրատուն չարձանագրեց որևէ հստակ ժամկետ, իսկ միջակայքերով նշված ժամկետները /3-7 աշխատանքային օր/ չեն հակասում հրավերում նշված ժամկետներին:

Պատվիրատուի կողմից նման ժամկետ սահմանելը ինքնանպատակ չէ և այն պայմանավորված է իր գործունեությամբ և իր կարիքին համապատասխան գնման առարկայի ձեռքբերմամբ: Գնման գործընթաց նախաձեռնելիս պատվիրատուն չի կարող սահմանել այնպիսի պայմաններ, որոնք ընդունելի կլինեն հնարավոր բոլոր մասնակիցների համար՝ նման պահանջ օրենսդրությամբ նախատեսված չէ»:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/18 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Արտադրողը և Ապրանքային նշանը	Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը

4	Կաթետր ախտորոշիչ	Մեդտրոնիք, DxTerity	Դիագնոստիկ կաթետր: Չափսերը՝ 5F, 6Fr: Տեսակների ձևերը JL3.5, JL4.0, JL 4.5, JL 5.0, JL 6.0,JR3.5, JR 4.0, JR 4.5, JR 5.0, JR 6.0, AL1.0, AL2.0, AL3.0, AR1.0,AR2.0, AR MOD, MPA, MPB, PIG, Արտաքին տրամագիծ՝ ոչ ավել քան 0.079":Ներքին տրամագիծը՝ ոչ ավել քան 0.056": Ծայրը՝ ատրավմատիկ, ռենտգենակոնտրաստ: Ճնշումը՝ 500-1200psi տիրույթի միջակայքում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
5	Կաթետր բալոն	Մեդտրոնիք, Sprinter	Սրտանոթային բալոն-կաթետերներ RX կամ NC տիպի:Կատթերի երկարությունը ՝ 138-142 սմ տիրույթի միջակայքում:Պրոֆիլը՝ ոչ ավել քան 0.016":Դիստալ շավթի երկարությունը՝ ոչ ավել քան 21սմ: Նյութը ՝ Soft Fulcrum Plus, ծածկույթը՝ Selective Dura-Trac: Աշխատանքային ճնշումը՝ 6-18մթն տիրույթում: Տրամագծերը՝ 1.5-5 մմ տիրույթում, երկարությունները՝ 6-30մմ տիրույթում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
14	Ստենտ դեղապատ	Մեդտրոնիք, Resolute integrity	Նյութը՝ կոբալտ-քրոմի համաձուլվածք: Մատակարարման համակարգի աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 140սմ: Կիրառվող նյութեր պոլիմեր՝ հեմոհամատեղելի: Բալոնի (կաթետերի) նյութ՝ Fulcrum: Կիրառվող դեղանյութը՝ Զոտարոլիմուս ացիտոտոքսիկ “limus” խմբի կամ Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ կամ Էվերոլիմուս դեղանյութ արտազատող: Դեղանյութի ձերբազատումը՝ 180 օրում ՝ 100%: Պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում: Ստենտի պատերի հաստությունը՝ 0.003”- 0.0036” տիրույթի միջակայքում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
Ընդհանուր պայմաններ			Բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ <<կամ համարժեքը>> բառերը: Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում: Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր, գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի 29.03.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. ***<u>Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը</u>***:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Այսպես՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժինների մասով սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Արտադրողը և Ապրանքային նշանը	Գնման առարկայի տեխնիկական և որակական բնութագրերը
4	Կաթետր ախտորոշիչ	Մեդտրոնիք, DxTerity	Դիագնոստիկ կաթետր: Չափսերը՝ 5F, 6Fr: ***<u>Տեսակների ձևերը JL3.5, JL4.0, JL 4.5, JL 5.0, JL 6.0,JR3.5, JR 4.0, JR 4.5, JR 5.0, JR 6.0, AL1.0, AL2.0, AL3.0, AR1.0,AR2.0, AR MOD, MPA, MPB, PIG</u>***, Արտաքին տրամագիծ՝ ոչ ավել քան 0.079":Ներքին տրամագիծը՝ ոչ ավել քան 0.056": Ծայրը՝ ատրավմատիկ, ռենտգենակոնտրաստ: Ճնշումը՝ 500-1200psi տիրույթի միջակայքում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
5	Կաթետր բալոն	Մեդտրոնիք, Sprinter	Սրտանոթային բալոն-կաթետերներ ***<u>RX կամ NC տիպի</u>***:Կատթերի երկարությունը ՝ 138-142 սմ տիրույթի միջակայքում:Պրոֆիլը՝ ոչ ավել քան 0.016":Դիստալ շավթի երկարությունը՝ ոչ ավել քան 21սմ: Նյութը ՝ Soft Fulcrum Plus, ծածկույթը՝ Selective Dura-Trac: Աշխատանքային ճնշումը՝ 6-18մթն տիրույթում: Տրամագծերը՝ 1.5-5 մմ տիրույթում, երկարությունները՝ 6-30մմ տիրույթում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
14	Ստենտ դեղապատ	Մեդտրոնիք, Resolute integrity	Նյութը՝ կոբալտ-քրոմի համաձուլվածք: Մատակարարման համակարգի աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 140սմ: Կիրառվող նյութեր պոլիմեր՝ հեմոհամատեղելի: Բալոնի (կաթետերի) նյութ՝ Fulcrum: Կիրառվող դեղանյութը՝ Զոտարոլիմուս ացիտոտոքսիկ “limus” խմբի կամ Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ կամ Էվերոլիմուս դեղանյութ արտազատող: Դեղանյութի ձերբազատումը՝ 180 օրում ՝ 100%: ***<u>Պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում:</u>*** Ստենտի պատերի հաստությունը՝ 0.003”- 0.0036” տիրույթի միջակայքում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ:
Ընդհանուր պայմաններ			***<u>Բնութագրերում գնման առարկայի առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կապարված հղումների հետ միասին հասկանալ <<կամ համարժեքը>> բառերը:</u>*** Մատակարարման ժամկետները և քանակները. Պայմանագրի շրջանակներում Ապրանքի մատակարարումն իրականացվելու է 2021թ. տարվա ընթացքում, ըստ փաստացի պատվերների, ընդ որում յուրաքանչյուր պատվերի առավելագույն քանակը չի կարող լինել ավելի պայմանագրի ընդհանուր քանակի 1/2-ից, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: ***<u>Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում:</u>*** Փաստացի կարիքից ելնելով նախատեսված քանակները կարող են ամբողջությամբ չպատվիրվել Պատվիրատուի կողմից և այդ մասով պայմանագիրը համարվում է լուծված հաշվարկային տարվա ավարտով: Մատակարարվող ապրանքները պետք է լինեն նոր,

	գործարանային փաթեթավորմամբ, պիտանելիության ժամկետները՝ հանձնման պահին առնվազն 75%-ը, բացառությամբ այն դեպքերի, երբ Պատվիրատուն կարիքից ելնելով համաձայնում է ընդունել ավելի կարճ ժամկետով ապրանք: Ապրանքի մատակարարումը՝ բեռնափոխադրումը, բեռնաթափումը և տեղափոխումը մինչև համապատասխան պահեստ, իրականացվում է Կատարողի ուժերով և միջոցներով ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով:

1. Անդրադառնալով 4-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ «Կաթետր ախտորոշիչ» ապրանքի համար սահմանված տեխնիկական բնութագրին, այն է՝ «Դիագնոստիկ կաթետր: Չափսերը՝ 5F, 6Fr: ***Տեսակների ձևերը JL3.5, JL4.0, JL 4.5, JL 5.0, JL 6.0,JR3.5, JR 4.0, JR 4.5, JR 5.0, JR 6.0, AL1.0, AL2.0, AL3.0, AR1.0,AR2.0, AR MOD, MPA, MPB, PIG,*** Արտաքին տրամագիծ՝ ոչ ավել քան 0.079": Ներքին տրամագիծը՝ ոչ ավել քան 0.056": Ծայրը՝ ատրավմատիկ, ռենտգենակոնտրաստ: Ճնշումը՝ 500-1200psi տիրույթի միջակայքում: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակ»՝ հարկ եմ համարում արձանագրել, որ տվյալ գնման առարկայի՝ «Կաթետր ախտորոշիչ» ապրանքի մի քանի տեսակները՝ ***JL3.5, JL4.0, JL 4.5, JL 5.0, JL 6.0,JR3.5, JR 4.0, JR 4.5, JR 5.0, JR 6.0, AL1.0, AL2.0, AL3.0, AR1.0,AR2.0, AR MOD, MPA, MPB, PIG,*** մեկ չափաբաժնում խմբավորելով՝ Պատվիրատուն արհեստականորեն սահմանափակել է հնարավոր մասնակիցների շրջանակը և նրանց միջև մրցակցության հնարավորությունը՝ արդյունքում խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները, քանի որ, քանի դեռ վերը շարադրված տեսակները խմբավորված են մեկ չափաբաժնում, այն արտադրողները, որոնք չեն արտադրում այդ տեսակներից թեկուզ մեկը, զրկված են Ընթացակարգին մասնակցելու՝ օրենքով իրենց վերապահված իրավունքն իրացնելու հնարավորությունից, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն պետք է հրավերում կատարի փոփոխություն և 4-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ «Կաթետր ախտորոշիչ» ապրանքի տեսակները՝ ***JL3.5, JL4.0, JL 4.5, JL 5.0, JL 6.0,JR3.5, JR 4.0, JR 4.5, JR 5.0, JR 6.0, AL1.0, AL2.0, AL3.0, AR1.0,AR2.0, AR MOD, MPA, MPB, PIG, տրոհի առանձին չափաբաժինների:***

2. Անդրադառնալով 5-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ «Կաթետր բալոն» ապրանքի համար սահմանված տեխնիկական բնութագրին, այն է՝ «***Սրտանոթային բալոն-կաթետրներ RX կամ NC տիպի***: Կատթերի երկարությունը՝ 138-142 սմ տիրույթի միջակայքում: Պրոֆիլը՝ ոչ ավել քան 0.016":Դիստալ շավթի երկարությունը՝ ոչ ավել քան 21սմ: Նյութը ՝ Soft Fulcrum Plus, ծածկույթը՝ Selective Dura-Trac: Աշխատանքային ճնշումը՝ 6-18մթն տիրույթում: Տրամագծերը՝ 1.5-5 մմ տիրույթում,

երկարությունները՝ 6-30մմ տիրույթում»՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն, մի չափաբաժնում խմբավորելով 2 տարբեր տիպի՝ ***RX կամ NC տիպի*** «Կաթետր բալոն» ապրանք և դրա համար սահմանելով ընդհանրական տեխնիկական բնութագիր, այս դեպքում նույնպես արհեստականորեն սահմանափակել է հնարավոր մասնակիցների շրջանակը և նրանց միջև մրցակցության հնարավորությունը՝ արդյունքում խախտելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն պետք է հրավերում կատարի փոփոխություն և 5-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ «Կաթետր բալոն» ապրանքի երկու տարբեր տեսակները՝ ***RX կամ NC տրոհի առանձին չափաբաժինների և յուրաքանչյուր տեսակի համար սահմանի իր տեսակին բնորոշ հստակ տեխնիկական բնութագիր:***

3. Անդրադառնալով 14-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ «Ստենտ դեղապատ» ապրանքի համար սահմանված տեխնիկական բնութագրին, այն է՝ «Նյութը՝ կոբալտ-քրոմի համաձուլվածք: Մատակարարման համակարգի աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 140սմ: Կիրառվող նյութեր պոլիմեր՝ հեմոհամատեղելի: Բալոնի (կաթետերի) նյութ՝ Fulcrum: Կիրառվող դեղանյութը՝ Զոտարոլիմուս ացիտոտոքսիկ “limus” խմբի կամ Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ կամ Էվերոլիմուս դեղանյութ արտազատող: Դեղանյութի ձերբազատումը՝ 180 օրում ՝ 100%: ***Պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում:*** Ստենտի պատերի հաստությունը՝ 0.003”- 0.0036” տիրույթի միջակայքում»՝ հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուի կողմից սահմանված պարամետրերը, այն է՝ Պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում, ընդհանրական են, քանի որ, կախված տրամագծից և երկարությունից, դեղապատ ստենդի տեսակը կարող է փոխվել, ուստի գտնում եմ, որ Պատվիրատուն պետք է հրավերում կատարի փոփոխություն՝ հստակ նշելով իրեն անհրաժեշտ «Ստենտ դեղապատ» ապրանքի տեսակը և սահմանելով դրան բնորոշ հստակ տեխնիկական բնութագիր:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Պատվիրատուի կողմից հրավերը կազմելիս վերը շարադրված երեք չափաբաժինների մասով որոշմամբ արձանագրված խախտումներին, հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն իր կողմից ներկայացված դիրքորոշմամբ որևէ կերպ չի հիմնավորել իր կողմից տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաների՝ մեկ չափաբաժնում

խմբավորելը, այսինքն՝ ***Պատվիրատուի կողմից խախտվել է նաև Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, այն է՝ արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը:***

4. Ինչ վերաբերում է ապրանքի մատակարարման ժամկետներին, այն է՝ «Առաջին խմբաքանակի մատակարարումը Գնորդը չի կարող պահանջել պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրից շուտ, եթե դրան համաձայն չէ Վաճառողը: ***Այնուհետև, մատակարարումները պետք է իրականացվեն ըստ փաստացի պատվերների՝ ոչ ուշ, քան 5 աշխատանքային օրվա ընթացքում***», գտնում եմ, որ Պատվիրատուն զրկված չէ իր կարիքի համար ապրանքների ձեռքբերման նպատակով գնման գործընթացն այնպես պլանավորելու և իրեն անհրաժեշտ նվազագույն խմբաքանակ պահեստավորելու հնարավորությունից, որպիսի պայմաններում կկարողանա սահմանել մատակարարման ավելի իրատեսական և ողջամիտ ժամկետ, ուստի այս մասով ևս գտնում եմ, որ Պատվիրատուն պետք է կատարի փոփոխություն՝ սահմանելով ապրանքների մատակարարման ողջամիտ ժամկետ՝ հաշվի առնելով տվյալ ապրանքների պատվիրման, գնման, բեռափոխադրման, մաքսազերծման և մատակարարման գործընթացները կամ ամբողջ քանակի համար սահմանի գնման ժամանակացույց (ըստ եռամսյակների, ամիսների...):

Գտնում եմ, որ վերոնշված փոփոխությունները կնպաստեն Ընթացակարգի մասնակիցների շրջանակի ընդլայնմանը, ինչը կհանգեցնի մրցակցության ապահովմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.03.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/46» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին փոփոխություններ կատարել հրավերի 4-րդ, 5-րդ և 14-րդ չափաբաժիններում՝ որոշմամբ ներկայացված հիմնավորումներով և վերլուծությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**